

**Կ Ա Ր Ծ Ի Ք**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՅԵՆՏ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**

*ԺԲ.00.06- Միջազգային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու համար ներկայացված Գրիգոր Արմենի Չոբանյանի «Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ*

Պետությունների տնտեսական ինքնիշխանության թեման կարելի է համարել միջազգային իրավունքի համատեքստում առավել սակավ ուսումնասիրված թեմաներից մեկը: Ինքնիշխանության հայեցակարգին սովորաբար անդրադարձ է կատարվում համալիր ուսումնասիրության լույսի ներքո և ինքնիշխանության տնտեսական ասպեկտի առաձնացումը և առանձին ուսումնասիրությունն արդեն իսկ կարելի է համարել նոր մոտեցում: Չնայած նրան, որ ինքնիշխանության հայեցակարգը մշտապես եղել է միջազգային իրավունքի մասնագետների ուսումնասիրության շրջանակներում, պետք է փաստել, որ հատկապես տնտեսական ինքնիշխանության թեման չի կորցրել իր արդիականությունը, քանզի հայեցակարգի նորովի հետազոտության անհրաժեշտությունն ի հայտ է գալիս գլոբալիզացիոն գործընթացների և միջազգային տնտեսական կարգի փոփոխությունների համատեքստում:

Թեման արդիական է նաև վերջին շրջանում տեխնոլոգիական զարգացումների լույս ներքո դիտարկման պարագայում, քանզի տեխնոլոգիական նորամուծությունները նոր մարտահրավերներ են առաջացրել հատկապես միջազգային հարկումների և պետությունների ֆինանսական իրավագորությունների ոլորտում: Այս զարգացումների արդյունքում պետությունները հաճախ կանգնում են տնտեսական ինքնիշխանությունից բխող մի շարք իրավագորությունների պահպանման անհրաժեշտության առաջ, ինչը ևս հիմնավորում է թեմայի շրջանակներում հետազոտության անհրաժեշտությունը:

Հեղինակը փորձել է հստակեցնել պետությունների տնտեսական ինքնիշխանությունից բխող իրավագորությունների շրջանակը՝ սահմանելով տնտեսական ինքնիշխանության հիմնական բաղադրատարրերը: Մասնավորապես, համալիր վերլուծության են ենթարկվել բնական ռեսուրսների նկատմամբ, օտարերկրյա ներդրումների ոլորտում, մաքսային և հարկային ոլորտներում պետությունների ինքնիշխանության հիմնախնդիրները, պետությունների արժույթային ինքնիշխանությանը վերաբերող մի շարք հիմնարար հարցեր:

Հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել պետությունների տնտեսական ինքնիշխանության հայեցակարգը, ներկայիս գլոբալիզացիոն գործընթացների ազդեցությունը պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա: Այս համատեքստում ի սկզբանե

անդրադարձ է կատարվել պետության ինքնիշխանության պատմական զարգացմանը: Հեղինակն ընդգծել է պետության ինքնիշխանության և ինքնիշխան իրավագործությունների միջև էական տարբերությունը և վերահաստատել, որ պետությունները կարող են զիջել կամ պատվիրակել ինքնիշխան իրավագործությունները, սակայն ինքնիշխանությունն ինքնին չի կարող դելեգացվել վերպետական կառույցների:

Հեղինակը, բաղդատելով տնտեսական ինքնիշխանության տարրերը, առաջնային ուշադրության է արժանացրել տնտեսական ինքնիշխանության անկյունաքարերից մեկին՝ բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանությանը: Ուսումնասիրության են ենթարկվել սկզբունքի իրավական ուժին վերաբերող հիմնախնդիրները, և վերլուծության արդյունքում հեղինակը վերահաստատել է դիրքորոշումն առ այն, որ մշտական ինքնիշխանության սկզբունքը հանդիսանում է միջազգային սովորութային իրավունքի մաս: Անդրադառնալով մշտական ինքնիշխանության սկզբունքի սահմանման բացակայությանն առնչվող հարցին՝ հեղինակն առաջարկում է դիտարկել Կանոյի կողմից բնական ռեսուրսների համապարփակ սահմանումը:

Առանձնակի անդրադարձ է կատարվել օտարերկրյա ներդրումների ոլորտում պետության ինքնիշխանության թեմային: Մասնավորապես, ուսումնասիրվել է օտարերկրյա ներդրումների ոլորտում ինչպես պետությունների իրավագործությունների, այնպես էլ դրանց սահմանափակումների շրջանակները: Հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել օտարերկրյա ներդրումների ոլորտում կարևորագույն թեմաներից մեկին՝ ազգայնացման և սեփականագրկման իրավունքին առնչվող հիմնահարցերին:

Առանձնակի կարևոր է աշխատանքում հեղինակի անդրադարձը տեխնոլոգիական զարգացումների ազդեցությանը պետության ֆիսկալ և արժույթային իրավագործությունների տիրույթում: Մասնավորապես, հեղինակի կողմից ուսումնասիրվել են թվային գործիքների միջոցով հարկերից խուսափելուն առնչվող հիմնահարցերը: Առանձնակի անդրադարձ է կատարվել նաև արժույթային ինքնիշխանությանը՝ հատկապես ժամանակակից բյուրեղյան տեխնոլոգիաների ազդեցության լույսի ներքո: Ներկայացվել է կրիպտոարժույթների կիրառումից բխող մարտահրավերները՝ հատուկ ուշադրություն է դարձվելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին վերաբերող կարգավորումներին, ինչպես նաև հարկերից խուսափելու դեմ ուղղված կարգավորումներին:

Հեղինակի կողմից կատարվել են տեսական եզրահանգումներ, ներկայացվել են տեսական հասկացություններ, իսկ գործնական առաջարկները արտացոլվել են համապատասխան օրենքներում փոփոխություն կատարելու հստակ ձևակերպումներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, իննը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են տնտեսական ինքնիշխանության և առհասարակ պետությունների ինքնիշխանությանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրները:

Գրիգոր Չոբանյանի ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ միջազգային իրավունքի շրջանակներում առաջին անգամ մեկ աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել պետությունների ֆինանսատնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը, ինչպես նաև ներկայացվել են այն պայմանները, որոնց առկայությունը սահմանափակում է տնտեսական ինքնիշխանության կոնկրետ տարրի ներքո պետությունների իրավագործության բացարձակ իրացումը: Ցույց է տրվել ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա, մասնավորապես՝ ուսումնասիրության է ենթարկվել բյուջայի տեխնոլոգիաների և կրիպտոարժույթների ազդեցությունը պետությունների արժույթային ինքնիշխանության ոլորտում և ինքնիշխանության վրա առհասարակ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են իմացության դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և այլ գիտական մեթոդներ, որոնց կիրառումը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտությունն արդի գլոբալիզացիոն պայմաններում տնտեսական հարրաբերություններում տեղի ունեցող փոփոխությունների և ինտեգրացիոն գործընթացների համատեքստում կնպաստի պետությունների տնտեսական ինքնիշխանությանն առնչվող խնդիրների բացահայտման, հետազոտության և լուծումներ փնտրելուն ուղղված գիտական ավելի խորը ուսումնասիրությունների իրականացմանը, իրավական կարգավորման հարցադրումների շրջանակի հստակեցմանը և դրանց զարգացման հետագա ուղիների բացահայտմանն ու կանխորոշմանը:

Աշխատանքի տեսական նշանակությամբ ընդգծվում է պետությունների տնտեսական ինքնիշխանության էական տարրերի բաղադրատման և դրանց մեկ աշխատանքի լույսի ներքո նեկայացմամբ:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, դատական նախադեպերից, ինչնը հարստացրել է ատենախոսության բովանդակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, հարկ է նշել, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսությունը, ինչպես ցանկացած աշխատանք, գուրկ չէ վիճելի դրույթներից և առանձին թերություններից, որոնց վերաբերյալ ներկայացվում են հետևյալը.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթներից առաջինում հեղինակն ընդգծում է, որ չի կարող լինել ոչ լիարժեք ինքնիշխան պետություն, միևնույն ժամանակ, հեղինակը նշում է, որ պետությունները կարող են զիջել իրենց իրավասությունները և ոչ ինքնիշխանությունը: Կարծում եմ հեղինակի կողմից առաջ քաշվող դրույթը կարիք չունի լրացուցիչ պաշտպանության և հեղինակի կողմից ներկայացվող փաստարկներն անվիճելի են ժամանակակից միջազգային իրավունքում, քանզի ինքնիշխանությունը հանդիսանում է պետության իրավասությունների անկունաքարերից մեկը և այն որևէ կերպ ենթակա չէ զիջման:

2. Աշխատանքի երկրորդ գլխի 2.1 ենթագլուխն ամփոփելիս հեղինակն առաջ է քաշում բնապահպանական միջամտության դոկտրինի կիրարկման անհրաժեշտությունը: Կարծում եմ, թեպետ նշված հիմնահարցը կարևոր նշանակություն ունի շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում պետությունների պարտավորության տեսանկյունից, այնուամենայնիվ, շեղվում է աշխատանքի բուն ուղղությունից և ուղղակիորեն վերաբերելի չէ հետազոտության առարկային:

3. Աշխատանքի երրորդ գլխի 3.1. ենթագլխում հեղինակը նշում է, որ հասունացել է միջազգային հարկային կազմակերպության ստեղծման պահը: Հաշվի առնելով պետությունների պահպանողական քաղաքականությունը հարկային ոլորտում և այն հանգամանքը, որ պետությունները հիմնականում հակված չեն զիջումների գնալու հարկային հարցերում՝ ցանկալի կլիներ, որ հեղինակն առավել մանրամասն ներկայացներ միջազգային հարկային մարմնի ստեղծման անհրաժեշտությունը:

4. Աշխատանքն ավելի կշահեր, եթե աշխատանքի երրորդ գլխի 3.3. ենթագլխում կրիպտոարժույթներից բացի հեղինակն անդրադարձ կատարեր նաև այլ կրիպտոակտիվներին և դրանց ազդեցությունը պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ: Գրիգոր Չոբանյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժևոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Գրիգոր Արմենի Չոբանյանի «Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.06- Միջազգային իրավունք մասնագիտությանը, բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԵՊՀ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ԴՈՅՆԵՏ, Ի. Գ. Թ. Կ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

*[Handwritten signature in blue ink]*

Դ. Գ. Թ., Գ. Գևորգյանի արքայազնությունը  
հաստատված է՝

Ձեռքով կրթության նախարարի և ԵՊՀ-ի ղեկավարի կողմից,  
կրթության նախարար, պրոֆեսոր Լ. Վ. Լուսինյան

